

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՄՐԱԳՐՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ**

ՀԱԿՈԲՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

Իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ,
Գավառի պետական համալսարանի ռեկտոր
Էլփոստ՝ ruzanna.hakobyan@mail.ru

Հոդվածը վերաբերում է Հայաստանի երրորդ Հանրապետությունում պատասխանատվության ինստիտուտի սահմանադրական ամրագրման հարցերին: Պատմական, համեմատադրական, տրամաբանական վերլուծությունների և այլ մեթոդներով ուսումնասիրվում են 1995 թվականին ընդունված, ապա 2005 և 2015 թվականներին փոփոխված ՀՀ Սահմանադրության այն դրույթները, որոնցից բխում են հանրային իշխանության մարմինների և պաշտոնատար անձանց սահմանադրական պատասխանատվության կամավոր (դրական կամ պոզիտիվ) և հարկադրական (բացասական կամ նեգատիվ) ձևերը: Առաջարկվում է ՀՀ հիմնական օրենքում ուղղակիորեն նախատեսել սահմանադրական պատասխանատվության ինստիտուտը՝ որպես իրավական պատասխանատվության ինքնուրույն և հատուկ տեսակ՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց պատասխանատվությունը բարձրացնելու, պետությունում սահմանադրական իրավակարգն ու օրինականությունն ամրապնդելու նպատակով: Ներկայացվում են սահմանադրական փոփոխությունների առաջարկներ:

Բանալի բառեր՝ Սահմանադրություն, սահմանադրական իրավահարաբերություն, իրավական պատասխանատվություն, սահմանադրական պատասխանատվություն, իրավակարգ, օրինականություն, սահմանադրական պատասխանատվության կամավոր ստանձնում, սահմանադրական պատասխանատվության հարկադրական կիրառում, հանրային իշխանություն, պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմիններ, պաշտոնատար անձինք:

Պատասխանատվությունը ընդգրկում և բազմիմաստ սոցիալական, իրավական, քաղաքական, բարոյական, հոգեբանական, մշակութային ինստիտուտ է, որն ունի դրսևորման տարբեր ձևեր:

Իրավական պատասխանատվության բազմաշերտ ինստիտուտը բաղկացած է պատասխանատվության մասին իրավանորմերի համակցությունից և կազմում է իրավունքի ընդհանուր համակարգի կարևոր բաղկացուցիչ մասը:

Իրավահարաբերությունների սուբյեկտները, ստանալով որոշակի կարգավիճակ, ձեռք բերելով այդ կարգավիճակով պայմանավորված իրավունքներ և պարտականություններ, կամավոր ստանձնում են պատասխանատվություն՝ իրենց պարտականությունների պատշաճ կատարման համար: Պետության կողմից սահմանված և ամրագրված պոզիտիվ իրավունքի պահանջների խախտման դեպքում վրա է հասնում պետական հարկադրանքը, այսինքն՝ օրենքով սահմանված հիմքերով և կարգով կիրառվում է իրավական պատասխանատվություն: Այսպիսով, իրավական պատասխանատվությունը դրսևորվում է հարկադրական (բացասական՝ նեգատիվ) և կամավոր (դրական՝ պոզիտիվ) ձևերով¹:

Իրավական պատասխանատվության յուրաքանչյուր տեսակ ունի իր ամրագրումը համապատասխան նորմատիվ ակտում, որտեղ սահմանվում են պատասխանատվության հիմքը, սկզբունքները, միջոցները:

Դիտարկենք, թե ինչպես է պատասխանատվության ինստիտուտն իր կամավոր և հարկադրական ձևերով ամրագրվել 1995 թվականին ընդունված ՀՀ Սահմանադրությունում, ապա 2005 և 2015 թվականներին փոփոխված սահմանադրական նորմերում: Վերլուծելով քանակական ցուցանիշները՝ պարզ է դառնում, որ 1995 թվականի հուլիսի 5-ի հանրաքվեով ընդունված Սահմանադրության տեքստում «պատասխանատվություն» հասկացությունը հիշատակվում էր 12 անգամ, 2005 թվականին փոփոխված Սահմանադրության տեքստում՝ 20 անգամ, իսկ արդեն 2015 թվականին փոփոխված, այսինքն՝ գործող Սահմանադրությունում՝ 13 անգամ²: Սահմանադրա-

¹ Այս մասին մանրամասն տե՛ս Հակոբյան Ռ. Խ., Սահմանադրական պատասխանատվության հիմնախնդիրները, «Իրավունք», Երևան, 2008, 516 էջ:

² Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, Երևան, 1995; ՀՀ Սահմանադրություն (փոփոխություններով), Երևան, 2005; ՀՀ Սահմանադրություն (փոփոխություններով), Երևան, 2015:



կան դրույթների նորմատիվ բովանդակության որակական կողմը քննելով՝ պետք է նշել, որ 1995 թվականի Սահմանադրությամբ 12-րդ և 13-րդ հոդվածներում «պատասխանատվություն» եզրույթն օգտագործվում է միայն բացասական իմաստով, այսինքն՝ սահմանադրական իրավանորմերը վերաբերում են միայն պատասխանատվության ինստիտուտի հարկադիր իրացման հիմքերին, սկզբունքներին ու կարգին: 2005 թվականի փոփոխված ՀՀ Սահմանադրությամբ 19-րդ և 20-րդ հոդվածներում «պատասխանատվություն»-ը կիրառվում է բացասական իմաստով, և միայն մեկ հոդվածում անդրադարձ է կատարվում պոզիտիվ սահմանադրական պատասխանատվությանը: Այսպես, 104-րդ հոդվածի 2-րդ պարբերությունում տեղական ինքնակառավարումը սահմանվում է որպես համայնքի իրավունք ու կարողություն՝ սեփական **պատասխանատվությամբ** բնակիչների բարօրության նպատակով Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան լուծելու տեղական նշանակության հարցերը: Այսինքն՝ սահմանադրական մակարդակում առանց այդ մասին նշելու ընդունվում է պոզիտիվ սահմանադրական պատասխանատվության ինստիտուտի գոյությունը՝ համայնքի պատասխանատվության ձևով:

Ինչ վերաբերում է գործող Սահմանադրությանը, ապա 13 հիշատակումից 9-ը բացասական առումով է, իսկ 4-ը՝ դրական: Հարկ է արձանագրել, որ հիմնական օրենքի չորս հոդվածում դրական պատասխանատվության սահմանումն արդեն ողջունելի է պոզիտիվ պատասխանատվության ինստիտուտի սահմանադրականացման տեսանկյունից: ՀՀ Սահմանադրության 12-րդ, 164-րդ, 179-րդ և 182-րդ հոդվածներում ուղղակի նախատեսված է պոզիտիվ պատասխանատվության ինստիտուտը: Սակայն դա չի նշանակում, որ այլ հոդվածներ չեն բովանդակում սահմանադրական պատասխանատվության մասին նորմեր: Սահմանադրության տարբեր հոդվածներ անուղղակի բովանդակում են նման նորմեր, սակայն առանց սահմանադրական պատասխանատվության՝ որպես իրավական պատասխանատվության ինքնուրույն և հատուկ տեսակի մասին հիշատակման: Օրինակ՝ ՀՀ Սահմանադրության 88-րդ հոդվածի 2-րդ մասից ուղղակիորեն բխում է, որ Ազգային ժողովը պոզիտիվ սահմանադրական պատասխանատվություն է կրում օրենսդիր իշխանության իրականացման համար¹, իսկ ՀՀ հիմնական

¹ Ազգային ժողովի մասին մանրամասն տե՛ս Հակոբյան Հ. Հ., Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի գործունեության մի քանի հիմնախնդիրների շուրջ, Երևան, 2005, 120 էջ: Հակոբ-

օրենքի 141-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է Հանրապետության նախագահի նեգատիվ սահմանադրական պատասխանատվությունը պաշտոնանկության ձևով՝ պետական դավաճանության, այլ ծանր հանցագործության կամ Սահմանադրության կոպիտ խախտման համար¹: Առաջարկում ենք հետագա սահմանադրական փոփոխությունների ընթացքում վերանայել «Սահմանադրության կոպիտ խախտում» հասկացությունը՝ հայեցողական մեկնաբանություններից և տարընթերցումներից զերծ մնալու, որոշակիության սահմանադրական սկզբունքը պահպանելու նպատակով: Մեր կարծիքով՝ հիմնական օրենքի ցանկացած խախտում պետք է որակել որպես կոպիտ խախտում, հետևաբար «կոպիտ» բառն առաջարկում ենք հանել տվյալ նորմի բովանդակությունից:

ՀՀ Սահմանադրության 12-րդ հոդվածը նվիրված է շրջակա միջավայրի պահպանությանն ու կայուն զարգացմանը: Հոդվածի առաջին մասի համաձայն՝ «Պետությունը խթանում է շրջակա միջավայրի պահպանությունը, բարելավումը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը՝ ղեկավարվելով կայուն զարգացման սկզբունքով և հաշվի առնելով **պատասխանատվությունն** ապագա սերունդների առջև»: Հիշատակված հոդվածում ամրագրված է պետության պոզիտիվ սահմանադրական պատասխանատվությունը գալիք սերունդների առջև՝ նրանց համար էկոլոգիապես մաքուր և առողջ շրջակա միջավայր ապահովելու առումով:

Հատկանշական է, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախաբանը հայ ժողովրդի պոզիտիվ սահմանադրական պատասխանատվության յուրօրինակ արձանագրումն է՝ ուղղված սերունդների ազատության, ընդհանուր բարեկեցության, քաղաքացիական համերաշխության ապահովմանը: Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության նախաբանում (պրեամբուլայում) ևս ամրագրված է ներկա և գալիք սերունդների առջև Ռուսաստանի Դաշնության բազմազգ ժողովրդի պոզիտիվ սահմանադրական պատասխանատվության մասին: Այսպես, սահմանված է. «Մենք՝ Ռուսաստանի Դաշնության բազմազգ ժողովուրդս, միավորված ընդհանուր ճա-

բյան Հ. Հ., Պառլամենտը և պառլամենտարիզմը Հայաստանի Հանրապետությունում, Երևան, «Տիգրան Մեծ», 2007, 708 էջ:

¹ ՀՀ Նախագահի սահմանադրաիրավական կարգավիճակի մասին մանրամասն տե՛ս Hakobyan H. H., Hakobyan R. Kh., Mertarchian M. Kh. Constitutional and legal status of the President of the Republic of Armenia, Право и управление-XXI век, Научно-практический рецензируемый журнал, МГИМО, Москва, N 3 (56), 2020, էջ 25-33:

կատագրով... Ելնելով ներկա և գալիք սերունդների առջև մեր Հայրենիքի համար **պատասխանատվությունից**... ընդունում ենք Ռուսաստանի Դաշնության Սահմանադրությունը»¹: Միաժամանակ իշխանության առաջնային սուբյեկտի՝ Ժողովրդի առջև բարոյական, քաղաքական, իրավական պատասխանատվություն են կրում հանրային իշխանության ինստիտուտները՝ պետական և համայնքային մարմիններն ու պաշտոնատար անձինք: Նրանց իրավական պատասխանատվության բարձրագույն ձևը սահմանադրական պատասխանատվությունն է, որի սահմանադրական ամրագրումը համարում ենք անհրաժեշտ և կարևոր՝ որպես Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական ռեժիմի ամրապնդման երաշխիք:

Սահմանադրական իրավահարաբերությունների սուբյեկտների սահմանադրական պատասխանատվության իրացման կամավոր և հարկադրական ձևերը (դրական ու բացասական ասպեկտները) կարող ենք ներկայացնել հետևյալ կառուցակարգերով.

1) սահմանադրական իրավանորմերում որոշակի կարգադրագրերի ամրագրում-անձի կողմից սահմանադրական իրավահարաբերությունների սուբյեկտի կարգավիճակի ձեռքբերում կամ սահմանադրական բազմանձնյա (կոլեգիալ) մարմնի ձևավորում-անձի կամ մարմնի կողմից սահմանադրական կարգադրագրերով ներկայացվող պահանջների պատշաճ կատարում-սուբյեկտի կողմից կամավոր սահմանադրական պատասխանատվության կրում,

2) սահմանադրական իրավանորմերում որոշակի կարգադրագրերի ամրագրում-անձի կողմից սահմանադրական իրավահարաբերությունների սուբյեկտի կարգավիճակի ձեռքբերում կամ սահմանադրական բազմանձնյա մարմնի ձևավորում-անձի կամ մարմնի (սուբյեկտի) կողմից սահմանադրական կարգադրագրերի խախտում, ներկայացվող պահանջների չկատարում կամ ոչ պատշաճ կատարում (սահմանադրական իրավախախտում)-իրավազոր մարմնի կողմից սահմանադրական իրավախախտման սուբյեկտի ենթարկում հարկադրական սահմանադրական պատասխանատվության:

Կամավոր սահմանադրական պատասխանատվության մասին նորմ է քվանդակում ՀՀ Սահմանադրության 164-րդ հոդվածի 10-րդ մասը, որի համաձայն՝ «Դատավորի համար սահմանվում է նրա բարձր կարգավիճա-

¹ Ст'я Конституция Российской Федерации //www. <https://legalacts.ru/doc/Konstitucija-RF>



կին և **պատասխանատվությանը** համապատասխանող վարձատրություն: Դատավորի վարձատրության չափը սահմանվում է օրենքով»: Նշված հոդվածում դատավորի ո՞ր պատասխանատվության մասին է ամրագրված, եթե ոչ արդարադատության անկախ և անաչառ իրականացման համար պոզիտիվ սահմանադրական պատասխանատվության:

2005 թվականի փոփոխություններով Սահմանադրության 104-րդ հոդվածի նորմատիվ բովանդակությունն ամրագրվել է 2015 թվականին փոփոխված Սահմանադրության 179-րդ հոդվածում, որի առաջին մասի համաձայն՝ «Տեղական ինքնակառավարումը տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքն ու կարողությունն է՝ համայնքի բնակիչների շահերից ելնելով, Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, սեփական **պատասխանատվությամբ** լուծելու համայնքային նշանակության հանրային հարցերը»: Այսպիսով, եթե 2005 թվականի ձևակերպման համաձայն՝ տեղական ինքնակառավարումը ճանաչվում էր որպես համայնքի պոզիտիվ սահմանադրական պատասխանատվություն, ապա 2015 թվականի փոփոխությունների արդյունքում այն սահմանվել է որպես տեղական ինքնակառավարման մարմինների՝ համայնքապետի և համայնքի ավագանու իրավունք ու կարողություն՝ համայնքի բնակիչների շահերից ելնելով, Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, սեփական **պատասխանատվությամբ** լուծելու համայնքային նշանակության հանրային հարցերը: Բացի դրանից՝ կատարվել է հետևյալ ճշգրտումը՝ ոչ թե պոզիտիվ սահմանադրական պատասխանատվության տիրույթում են ընդհանրապես բոլոր տեղական նշանակության հարցերը, այլ համայնքային նշանակության հանրային հարցերը՝ բացառելով մասնավոր հարցերը, որոնց լուծումը տեղական ինքնակառավարման մարմինների պոզիտիվ պատասխանատվության շրջանակից դուրս է:

ՀՀ Սահմանադրության 182-րդ հոդվածը սահմանում է համայնքի խնդիրները և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները: Հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Համայնքի ղեկավարը կատարում է համայնքի ավագանու որոշումները, իրականացնում է համայնքի աշխատակազմի ընդհանուր ղեկավարումը: Համայնքի ղեկավարը **պատասխանատու է** համայնքի ավագանու առջև»: Այս նորմը վերաբերում է համայնքի ղեկավարի ստանձնած պոզիտիվ սահմանադրական պատասխանատվությանը, համայնքի ավագանու և ընդհանուր համայնքի առջև նրա հանձնառությանը:

Երբ Սահմանադրությամբ և ընդհանրապես իրավանորմերով ամրագրվում են սուբյեկտի կողմից պատասխանատվություն ստանձնելու, իր կարգավիճակին համապատասխան պատասխանատվություն կրելու, երդում տալու և երդմամբ սուբյեկտի լիազորություններն ուժի մեջ մտնելու, գործառությանին պարտականությունները կամավոր կատարելու, իր իրավասությունները պատշաճ իրացնելու մասին դրույթներ, ապա դրանով իսկ նախատեսվում են կամավոր սահմանադրական պատասխանատվության հիմքերն ու կառուցակարգերը, իսկ եթե ամրագրվում է պատասխանատվության ենթարկվելու մասին, ապա տվյալ նորմը վերաբերում է իրավական պատասխանատվության հարկադրական ձևերին, այդ թվում՝ սահմանադրական պատասխանատվությանը: Օրինակ՝ ՀՀ գործող Սահմանադրության 175-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետում սահմանվում է Բարձրագույն դատական խորհրդի լիազորությունը՝ լուծելու դատավորին կարգապահական **պատասխանատվության ենթարկելու** հարցը: Այս նորմը մի կողմից նախատեսում է Բարձրագույն դատական խորհրդի պոզիտիվ սահմանադրական պատասխանատվությունը՝ համապատասխան հիմքերի առկայության դեպքում օրենքով սահմանված կարգով դատավորին ենթարկելու հարկադրական իրավական պատասխանատվության, իսկ մյուս կողմից՝ սահմանում է դատավորի կարգապահական պատասխանատվության կառուցակարգը:

ՀՀ Սահմանադրության 190-րդ հոդվածը, որը վերաբերում է համայնքների միավորմանը և բաժանմանը, սահմանում է. «Հանրային շահերից ելնելով՝ համայնքները կարող են օրենքով միավորվել կամ բաժանվել: Ազգային ժողովը համապատասխան օրենք ընդունելիս պարտավոր է **լսել** այդ համայնքների կարծիքը»: Այսպիսով, սահմանվում է ՀՀ օրենսդիր, ներկայացուցչական մարմնի՝ Ազգային ժողովի պոզիտիվ սահմանադրական պատասխանատվությունը¹ լսելու միավորման կամ բաժանման ենթակա համայնքների կարծիքը, սակայն Սահմանադրությունն այդպես էլ չի սահմանում **համայնքներին լսելու** ձևերն ու կարգը՝ խնդիրը վերապահելով «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի կարգավորմա-

¹ Ազգային ժողովի սահմանադրական պատասխանատվության մասին տե՛ս Акопян Г. Г., Акопян Р. Х. Парламент как субъект конституционной ответственности // Конституционное правосудие, Вестник Конференции органов конституционного контроля стран молодой демократии, Вып. 1 (31), Ереван, 2006, էջ 97-114:

նը: Կամ ՀՀ Սահմանադրության 50-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք պարտավոր են մինչև անձի համար միջամտող անհատական ակտն ընդունելը լսել նրան, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի»: Այս նորմը ևս պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց համար նախատեսում է պոզիտիվ սահմանադրական պատասխանատվություն՝ լսելու անձին նրա համար միջամտող անհատական ակտն ընդունելուց առաջ, սակայն «լսելու» ձևերն ու կարգը ևս թողնված է իրավասու վարչական մարմինների և պաշտոնատար անձանց հայեցողությանը: Իսկ ըստ 51-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «Տեղեկություններ ստանալու կարգը, ինչպես նաև տեղեկությունները թաքցնելու կամ դրանց տրամադրումն անհիմն մերժելու համար պաշտոնատար անձանց **պատասխանատվության** հիմքերը սահմանվում են օրենքով»: Նշված նորմը վերաբերում է պաշտոնատար անձանց հարկադրական պատասխանատվության ինստիտուտին:

ՀՀ Սահմանադրությունը ներառում է իրավական պատասխանատվության համալիր ինստիտուտին վերաբերող բազմաթիվ նորմեր, օրինակ՝ 62-րդ հոդվածը վնասի հատուցման իրավունքի մասին է, 63-րդ հոդվածը սահմանում է արդար դատաքննության իրավունքը, 68-րդ հոդվածն ամրագրում է կրկին դատվելու արգելքը, 72-րդ հոդվածը բովանդակում է հանցագործություններ սահմանելիս և պատիժներ նշանակելիս օրինականության հիմնարար սկզբունքը, 73-րդ հոդվածը նախատեսում է օրենքների և այլ իրավական ակտերի հետադարձ ուժի սկզբունքը:

2015 թվականի փոփոխությունների արդյունքում ՀՀ Սահմանադրության մեջ ամրագրվեցին համաչափության և որոշակիության սկզբունքները (78-րդ և 79-րդ հոդվածներ), ինչպես նաև մեղքի սկզբունքը և պատժի համաչափության սկզբունքը՝ որպես հարկադրական իրավական պատասխանատվության հայեցակարգային դրույթներ: Հատկանշական է, որ ի տարբերություն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության՝ աշխարհի որևէ այլ պետությունում մեղքի՝ որպես հանցանք կատարած անձի պատժի, այսինքն՝ հարկադրական իրավական պատասխանատվության հիմքի սկզբունքը և պատժի համաչափության սկզբունքը չունեն սահմանադրական

ամրագրում¹: Դրա փոխարեն այլ երկրների սահմանադրություններում նախատեսված է սահմանադրական պատասխանատվության ինստիտուտը, որն ուղղակիորեն ամրագրված չէ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ: Մասնավորապես Լեհաստանի Հանրապետության Սահմանադրությունը 198-րդ հոդվածում ամրագրում է սահմանադրական պատասխանատվության ինստիտուտը և նախատեսում այն անձանց, ովքեր «սահմանադրական պատասխանատվություն են կրում Սահմանադրության կամ օրենքի խախտման համար՝ կապված իրենց զբաղեցրած պաշտոնի կամ ծառայողական պարտականությունների կատարման հետ»²: Իսկ Չինաստանի Ժողովրդական Հանրապետության հիմնական օրենքը սահմանում է պատասխանատվություն Սահմանադրության խախտման համար, որը կիրառվում է Սահմանադրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինների կողմից օրենքով սահմանված կարգով³:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը նախատեսում է սահմանադրական իրավահարաբերությունների սուբյեկտների կողմից կամավոր սահմանադրական պատասխանատվություն ստանձնելու հիմքերն ու կարգը, միաժամանակ բովանդակում սահմանադրաիրավական սանկցիաներ, այսինքն՝ նախատեսում է հարկադրական սահմանադրական պատասխանատվության միջոցներ՝ առանց սահմանադրական պատասխանատվության մասին հիշատակման, այսինքն՝ առանց քննարկվող ինստիտուտի սահմանադրական ճանաչման ու ամրագրման: Օրինակ՝ ՀՀ Սահմանադրության 98-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Պատգամավորի լիազորությունները դադարեցվում են յոբաքանջյուր օրացուցային կիսամյակի ընթացքում քվեարկությունների առնվազն կեսից անհարգելի բացակայելու, ինչպես նաև Սահմանադրության 95-րդ հոդվածի պահանջները խախտելու դեպքերում», այսինքն՝ պատգամավորական մանդատի անհամատեղելիության մասին սկզբունքը խախտելը՝ իր կարգավիճակով չպայմանավորված

¹ Տե՛ս Վարդանյան Վ., Մեղքի և պատժի համաչափության սկզբունքները սահմանադրական կարգավորումների և եվրոպական իրավական չափորոշիչների համայնապատկերում, Երևան, 2021, էջ 138:

² Տե՛ս Конституция Республики Польша // Конституционное (государственное) право зарубежных стран, Т. 3, М., 1995:

³ Տե՛ս Трошинский П. В. Юридическая ответственность по законодательству КНР // Журнал российского права, 2000, N 4, էջ 148-149, 154:



պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, առևտրային կազմակերպություններում զբաղեցնելը, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելը, գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից բացի վճարովի այլ աշխատանք կատարելը պատգամավորի հարկադրական սահմանադրական պատասխանատվության հիմք են: ՀՀ հիմնական օրենքը ներառում է նաև դրական՝ պոզիտիվ սահմանադրական պատասխանատվության մասին դրույթներ՝ դարձյալ առանց ուղղակիորեն ամրագրելու սահմանադրական պատասխանատվությունը որպես իրավական պատասխանատվության ինքնուրույն և հատուկ տեսակ: Կարող ենք մատնանշել ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածը, որի 16 կետերը սահմանում են պետության քաղաքականության հիմնական նպատակները տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում, իսկ 87-րդ հոդվածից բխում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պոզիտիվ սահմանադրական պատասխանատվությունը՝ իրենց իրավասությունների և հնարավորությունների շրջանակում իրագործելու Սահմանադրությամբ սահմանված նպատակները:

ՀՀ Սահմանադրության 156-րդ հոդվածից ածանցվում է ՀՀ կառավարության պոզիտիվ սահմանադրական պատասխանատվությունը՝ յուրաքանչյուր տարվա համար զեկույց ներկայացնելու Ազգային ժողով իր ծրագրի կատարման ընթացքի և արդյունքների մասին, այդ թվում՝ տեղեկատվություն ներկայացնելու Սահմանադրության 86-րդ հոդվածով սահմանված նպատակների իրագործման վերաբերյալ: ՀՀ կառավարության դրական սահմանադրական պատասխանատվությանն են վերաբերում Սահմանադրության 151-րդ հոդվածը կառավարության ծրագրի մասին, 146-րդ հոդվածը կառավարության ծրագրի հիման վրա պետության ներքին և արտաքին քաղաքականությունը մշակելու և իրականացնելու վերաբերյալ, 110-րդ հոդվածը պետական բյուջեի մասին և այլ հոդվածներ: ՀՀ Սահմանադրության 111-րդ հոդվածը սահմանում է Ազգային ժողովի դրական սահմանադրական պատասխանատվությունը՝ վերահսկողություն իրականացնելու պետական բյուջեի կատարման, ինչպես նաև օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից ստացված փոխառությունների և վարկերի օգտագործման նկատմամբ, 116-րդ հոդվածը նախատեսում է ՀՀ օրենսդիր մարմնի պոզիտիվ սահմանադրական պատասխանատվությունը՝ վավերացնելու, կասեցնելու և չեղյալ հայտարարելու միջազգային պայմանագրերը: ՀՀ

Սահմանադրության այլ հոդվածներ ևս բովանդակում են պատասխանատվության ինստիտուտին վերաբերող իրավակարգավորումներ: Այդուհանդերձ, հարկ է նշել, որ թեև Հայաստանի Հանրապետության 1995 թվականի Սահմանադրությամբ հիմնադրվեց սահմանադրական արդարադատության ինստիտուտը, ամրագրվեց ՀՀ Սահմանադրական դատարանի՝ սահմանադրական վերահսկողություն իրականացնելու լիազորությունը, նախատեսվեցին հարկադրական սահմանադրական պատասխանատվության միջոցներ՝ ՀՀ Նախագահի պաշտոնանկություն, Ազգային ժողովի արձակում, օրենքի ճանաչում հակասահմանադրական, ՀՀ կառավարությանն անվստահության հայտնում և այլն, սակայն պետության հիմնական օրենքում չամրագրվեց «սահմանադրական պատասխանատվություն» հասկացությունը, չընդունվեց սահմանադրական պատասխանատվության ինստիտուտը: Այն չսահմանվեց նաև 2005, ապա 2015 թվականների սահմանադրական փոփոխություններում, թեպետ 2015 թվականի սահմանադրական բարեփոխումների հայեցակարգում նախատեսվում էր դրա ներդրումը: Այսպես, ըստ Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի՝ «Իրավական պետությունում պետք է բացառվի քաղաքական, տնտեսական և վարչական ներուժի սերտաճումը, երաշխավորված ու ապահովված պետք է լինի քաղաքական ուժերի նպատակների ու գործունեության սահմանադրականությունը, ...» պետք է կարևորվի իրավունքի գերակայության սկզբունքը: Այս գերիխնդրի լուծմանը կծառայեն ոչ միայն արդեն իսկ ձևավորված սահմանադրական ինստիտուտների բարելավմանն ուղղված միջոցները, այլև միանգամայն նոր գաղափարախոսությամբ ներծծված ինստիտուտները: Մասնավորապես նախատեսվում է ներդնել **սահմանադրական պատասխանատվության** նոր համակարգ»¹: Հայեցակարգում կարևորվել է սահմանադրական պատասխանատվության ինստիտուտը և անդրադարձ է կատարվել դրա իրականացման կառուցակարգին. «Անհրաժեշտ է ներդնել **սահմանադրական պատասխանատվության ինստիտուտը**, որի պարագայում կերաշխավորվի պետական իշխանության մարմինների ու պաշտոնատար անձանց հանրային-իրավական պատասխանատվությունն իրենց ծրագրանպատակային գործունեության ու լիազորությունների իրականացման հարցում: Տվյալ դեպ-

¹ Տե՛ս Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի դրույթները և դրանց իրացման հիմնական ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում, Երևան, «Հայրապետ», 2015, էջ 31-32:



քում կարող են կիրառելի լինել ինչպես գործող արդարադատության ատյանները, այնպես էլ կարող է նախապատվությունը տրվել սահմանադրական մարմինների ներկայացուցիչներից կազմված ատյանի ձևավորմանը: Կարևորը տվյալ դեպքում այնպիսի իրավական լուծումներ առաջադրելն է, որի արդյունքում բացառվի անպատժելիության հենքով սահմանադրական խախտումների երևույթը»¹:

Այսպիսի հիմնավորումներից հետո սահմանադրական պատասխանատվության ինստիտուտը նախատեսվեց սահմանադրական փոփոխությունների նախագծի նախնական տարբերակում: Սակայն, առանց որևէ հիմնավորման սահմանադրական պատասխանատվության ինստիտուտը տեղ չգտավ ժողովրդին ներկայացված և հանրաքվեով ընդունված վերջնական փոփոխություններում:

Կարծում ենք, որ սահմանադրական նոր փոփոխություններ կատարելիս պետության հիմնական օրենքում անհրաժեշտ է ամրագրել «սահմանադրական պատասխանատվություն» հասկացությունը՝ նախատեսելով սահմանադրական պատասխանատվության ինստիտուտի իրացման ինչպես կամավոր, այնպես էլ հարկադրական ձևերը, հիմքեր ստեղծելով ՀՀ-ում հանրային իշխանության մարմինների ու պաշտոնատար անձանց սահմանադրական կարգավիճակում պոզիտիվ սահմանադրական պատասխանատվությունը ներառելու, նրանց բարոյական, քաղաքական և իրավական պատասխանատվությունը բարձրացնելու, իսկ սահմանադրական իրավախախտումների (դելիկտների) կատարման դեպքում հարկադրական սահմանադրական պատասխանատվության միջոցներ կիրառելու, պետությունում սահմանադրական ճգնաժամերը հաղթահարելու և սահմանադրական իրավակարգն ու օրինականությունն ամրապնդելու համար:

¹ Նույն տեղում, էջ 152:



ABOUT CONSTITUTIONAL ENTRENCHMENT OF INSTITUTE OF LIABILITY IN THE REPUBLIC OF ARMENIA

HAKOBYAN RUZANNA

Doctor of Laws, Associate Professor

Rector of Gavar State University

e-mail: ruzanna.hakobyan@mail.ru

The article refers to the issues of constitutional entrenchment of the institution of liability in the Third Republic of Armenia. Historical, comparative-legal, logical analysis and other methods are used to study the provisions of the Constitution of the Republic of Armenia adopted in 1995 and then amended in 2005 and 2015, wherefrom the voluntary (positive) and compulsory (negative) modes of constitutional liability of public authorities and officials entail. It is proposed to directly envisage the institution of constitutional liability in the Basic Law of the Republic of Armenia as an independent, special type of legal responsibility, in order to increase the responsibility of state and local self-government bodies and officials, as well as to strengthen the constitutional legal order and legality in the state.

Proposals for constitutional amendments are presented.

Key words: *Constitution, constitutional legal relationship, legal responsibility, constitutional liability, legal order, legality, voluntary assumption of constitutional liability, compulsory application of constitutional liability, public authorities, state authorities and local self-government bodies, officials.*



О КОНСТИТУЦИОННОМ ЗАКРЕПЛЕНИИ ИНСТИТУТА ОТВЕТСТВЕННОСТИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

АКОБЯН РУЗАННА

*Доктор юридических наук, доцент,
Ректор Гаварского государственного университета
электронная почта: ruzanna.hakobyan@mail.ru*

В статье рассматриваются вопросы конституционного закрепления института ответственности в третьей Республике Армения. Методами исторического, сравнительно-правового, логического анализа изучаются положения Конституции РА, принятой в 1995 г., затем конституционные изменения 2005 и 2015 гг., из которых вытекают добровольная (положительная или позитивная) и принудительная (отрицательная или негативная) конституционная ответственность государственных органов и должностных лиц.

Предлагается в Основном Законе РА предусмотреть институт конституционной ответственности как самостоятельный и особый вид юридической ответственности с целью повышения ответственности государственных институтов, органов местного самоуправления и должностных лиц, усиления конституционного порядка и законности в государстве.

В статье представлены предложения по внесению поправок в Конституцию РА.

Ключевые слова: Конституция, конституционные отношения, юридическая ответственность, конституционная ответственность, право-порядок, законность, позитивная конституционная ответственность, принудительная конституционная ответственность, публичная власть, государственные органы, органы местного самоуправления, должностные лица.

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 28.08.2021թ.:
Հոդվածը գրախոսվել է 02.10.2021թ.: